ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

16 Մայիսի 2017 թվականի N 46

ԱՐՄԵՆ ԷԴՈՒԱՐԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8.1,10,11,13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով, որ Արմեն Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Երիտասարդության փողոց թիվ 48/1 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմեն Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Երիտասարդության փողոց թիվ 48/1 հողամասում գտնվող S=136.56քմ «ինքնակամ բնակելի տունը», S=17.7քմ «ինքնակամ շինությունները» և S=2.85քմ «ինքնակամ պարիսպը» համարել օրինական՝ հիմք ընդունելով <<ԳԻՄ-ԱՐՏ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2.Պարտավորեցնել նրան համայնքի բյուջե վճարելու 136.56քմ ինքնակամ բնակելի տան համար, 1քմ-ը 2600 դրամ, ընդամենը՝355060 /երեք հարյուր հիսունհինգ հազար վաթսուն/ դրամ, 17.7քմ ինքնակամ շինությունների և 2.85քմ ինքնակամ պարսպի համար, 1քմ-ը 1560 դրամ, ընդամենը՝ 32060 /երեսուներկու հազար վաթսուն/ դրամ:

3.Գումարը պետք է փոխանցվի Ձորաղբյուրի համայնքապետարանի, Աբովյանի ՏԳԲ, 900105221213՝ ինքնակամ կառույցների պետ գրանցում, հաշվեհամարին:

4.Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 30-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՊԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
17 Մայիսի 2017 թվականի N 47

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10,11,22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նունե Թումանյանին և Սիրանուշ Մարուկյանին սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզ Ձորաղբյուր Ջրվեժ ավան 19 տեղամաս թիվ 13 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նունե Թումանյանին և Սիրանուշ Մարուկյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Ձորաղբյուր Ջրվեժ ավան 19 տեղամաս թիվ 13 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված S=38.40քմ «ինքնակամ կիսանկուղը» և S=14.16քմ «ինքնակամ ծածկը» համարել օրինական՝ հիմք ընդունելով <<ՖԻՆԼՈՒ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ կառույցները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ինքնակամ շինության օրինականացման համար վճար չի գանձվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» Մայիսի 2017 թվականի N 48

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նունե Իգորի Թումանյանի դիմումը և ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 25-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն՝ հանգամանքը, որ Նունե Թումանյանին և Սիրանուշ Մարուկյանին ժառանգության իրավունքով պատկանող հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ և հաշվի առնելով, որ առաջին պետական գրանցման աշխատանքներից չեն օգտվել և 1982 թվականից նշված հողամասը փաստացի օգտագործում են՝

Որոշում եմ

1. Ճանաչել Նունե Թումանյանի և Սիրանուշ Մարուկյանի սեփականության իրավունքը փաստացի օգտագործվող 826.9քմ մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ, որը փաստացի նրանց կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

19 Մայիսի 2017 թվականի N 49

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10,11,22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լևոն և Արթուր Պողոսյաններին սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզ Ձորաղբյուրի այգետարածքի 36 թաղամաս թիվ 26 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Լևոն և Արթուր Պողոսյաններին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Ձորաղբյուրի այգետարածքի 36 թաղամաս թիվ 26 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված S=31.7քմ «ինքնակամ բնակելի տունը», S=37.8քմ «ինքնակամ բնակելի տունը», S=11.5քմ «ինքնակամ աստիճանահարթակը», S=28.7քմ «ինքնակամ բնակելի տունը», S=3.6քմ «ինքնակամ բաց պատշգամբը» և S=1.3քմ «ինքնակամ պարիսպը» համարել օրինական՝ հիմք ընդունելով <<Անշարժ գույք>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ կառույցը կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ինքնակամ շինության օրինականացման համար վճար չի գանձվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ